զամենայն զէն կավոյ՝ որչափ ունէր, զամենայն հրամայեաց զի ընդ ինքեանս բերիցեն, եթէ սրեղէն և եթէ հրեղէն. և ի նոյն ժամ ժողովեաց ընդ իւր զամենայն պատերազմող և քաջ զօրքն իւր, որ էին անթիւ բազումք։ Եւ եկն (եւ) ընդդէմ նոցա. և ահա և նոքա հասին ընդդէմ նորա. և զտեղի առին ընդդէմ միմեանց, ոմն այս կոյս և ամն այն կոյս։ Եւ ահա սկսաւ պիղծն հպարտանալ իբրեւ զԲելիար. և սկսաւ բարձր բարբառով հրամայել անօրէն զօրաց իւրոց, եթէ՝ Ուրախ լերուք զօրք իմ և իշխանք, զի ահա եկին թշնամիք մեր ի ձեռս մեր. բայց խնդրեմք ի ձէնջ վասն Աստուծոյ, որ բնաւ զոք չի սպաննէք. զամենեսեան կենդանի կալջիք և կապեսջիք. զի ես ձեռամբ իմով անհնարին տանջանօք սատակեցից զդոսա։

Եւ անօրէնն բարձեալ էր երկու սայլի ցիցք սրեալ, և էր թուով 2000

Արդ՝ ըղկամք թագաւորին,
Եւ մկրտիր հաւատ հասմին.
Թէ չէ՝ զանմեղ գառինք քոյին
Սըրոյ ճարակ տուիր դահճին։
Մընողական զուլթն չարժեցաւ
Եւ իւր աըղոց ողորմեցաւ,
Եւ ակամայ մըկըրտեցաւ
Եւ յՕլախի հաւատ մըտաւ։
Ի յայս վերջի ժամանակի
Հայոց ազգըս կան վըտանկի,
Եւ տարագիր ի յաշխարհի՝
Այս Օլախաց փոքրիկ երկրի։
Վա՜յ և եղո՜ւկ հազար բերան,
Հառաչեցէք ամենքեան.
Այս Օլախաց Հայերս որ կան՝
Ի հաւատոցըն զըրկեցան.
Եկեղեցիքըն քակտեցան,
Այս սուրբ տաճարքըն այրեցան [1].
Աղնիւ գրեանքն հուրն այրեցան
Ի ժամատեղին ոչինչ դարձան [2]։
Խիստ գեղեցիկ անօթք կային,
Խաչ և ոսկիք և չուրջառնին.
Աղէկ մարդկանց յիշատակնին՝
Բաժին եղաւ Օլախ ազգին։
Այն քաջ ուսած երիցանին
Քաղցրաբարբառ սարկաւագնին.
Թագաւորին և զ՚Ալէլուին
Ցանկարծակի խափանեցին։
Այն հրաշալի դիշերժամին
Զեկեղեցեաց ուխտ ի յօրին [3],
Զայն հանդիսի [4] ըղմատաղնին
Զընընջեցելոց մեծ թաղումին.
Մեծի Ծննդեան Ջրօրհնեացն օրին, [5]
Առաջաւորք, սուրբ Մեծ պասին.
Տեառնընդառաջ քառասնօրին,
Եւ Աւետման սրբոյ Կուսին.
Արմաւենեաց ծաղկազարդին,
Մեծահանդէս Զատկի օրին,
Ցինանց վըճար Համբարձմանին
Եւ Հոգւոյ գալըստեան օրին.
Վարդավառին օր կիրակին,
Աստուածածնի ննջման օրին,
Եւ Սուրբ Խաչի մեծի տօնին, [6]
Եւ այլ սրբոցն ողք տօնէին.
Այն հրաշալի մեծ աղօթնին
Որ կարդայուէր ժամատեղին.
Զօրն [7] սրբոց խիստ պատուէին.
Եւ զտէրունի օր կիրակին։
Ամենքեան ոչինչ դարձան,
Ժամ և աղօթք խափանեցան,
Իրիցանիք կարգէն անկան
Եւ ժողովուրդք մոլորեցան.
Երկրոյ երկիր չատոնք անկան
Քահանայք և աշխարհական.
Բազում եղբարք բաժանեցան
Դարիպութիւն վտարեցան։

1. Անտես եղան։
2. Զայն պաշտամանցըն վերացան։
3. Ուխտի նորին։
4. Հանդիսաւոր։
5. Ջըրօրհնէին։
6. Խաչվերացի սըրբոյ ուխտին։
7. Զտօնըն։